

տաւորներն ուխտի կ'երթան նոյն Ձիթենիին . անոնց ներկայութեամբ պաշտամունք կը կատարուի և Աւետարան կը կարդացուի ծառին տակ (Յովհ. ԺԸ. 13-24) :

Այս ծառը պատմական պարագայէ ալ դուրկ է : Երուսաղէմի Հայոց Եղիազար պատրիարք - կաթողիկոսը 1666 ին Ս. Մննդեան տօնի օրը Ս. Յակոբի Տաճարին մէջ միւռնուօրհնութիւն կը կատարէ նոյն ձիթենիին քամուած իւղով, եւ նոյն միւռնոնէն կը բաշխէ եկեղեցիներուն, և Հռոմի պապին ալ կը ղրկէ լատինաց խնդրանքին համաձայն (Մխի. էջ 103-106) :

զ) Բաներ. — Այս բանտը կը կոչուի առաջին, որովհետեւ մեր Փրկիչը երբ Աննայի տունը բերուեցաւ առաջին անգամ ըլլալով այդ տեղը բանտարկուեցաւ, եւ յետոյ կատարուեցաւ հարցաքննութիւնը : Առաջին բանտը կը գտնուի եկեղեցիին հիւսիսային կողմը, խցանման փոքրիկ տեղ մը ուր կայ պատարագաւսոյց սեղան, ներքեւ բոլորակ փոս մը, յատակը և շրջապատը գեղեցիկ եւ քանդակածոյ մարմարիտներով զարդարուած և մշտավառ կանթեղներով լուսաւորուած :

դ) Ոխանակայի ֆար. — Այս քարը կը գտնուի եկեղեցիին արեւելեան կողմը, պատէն դուրս աջակողմի անկիւնը . նոյն քարը ունի բացուածք մը մարդու բերանին նման : Յովհաննէս եպօ . Երուսաղէմացին հետեւեալ բացատրութիւնը կուտայ այս մասին . 'Քրիստոսի' էչով և աւանակով այս տեղէն անցած ժամա-

---

կ'այրեն Ասուածայայնութեան գիշերը, վասնզի միայն այս ծառէ է որ իր հպարտութեան վրայ վասնացած նոյն օրը եկիւրագութեան ծնւադրութիւն չէ կատարած (P. O. S. 1934, էջ 85) :